Լրամշակված նախագիծ
Կ-499-23.01.2023,13.03.2023-ՊԻ-011

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրային արբիտրաժի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-55-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում.

1) 4-րդ կետի առաջին նախադասության «վեճերը» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ դրանց առնչությամբ գործարքների կնքված լինելու կամ անվավերության հետ կապված հարցերը» բառերը.

2) 7-րդ կետի «25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի» բառերը փոխարինել «25-րդ հոդվածի 1-ին կետի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Սույն օրենքի» բառերից հետո լրացնել «16-րդ հոդվածի 3-րդ մասով,» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «որևէ ձևով» բառերից առաջ լրացնել «սույն մասով սահմանված» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունում «իսկ» բառից հետո լրացնել «միջազգային արբիտրաժի դեպքում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում: Արբիտրին բացարկ հայտնելու հիմքերը, ի թիվս այլնի, ներառում են այն դեպքերը, երբ.

1) արբիտրը կանխակալ վերաբերմունք ունի արբիտրաժի կողմի կամ մասնակցի(կողմի ներկայացուցչի, արբիտրաժային վարույթում որպես վկա, փորձագետ, մասնագետ ներգրավված անձանց) նկատմամբ.

2) արբիտրը նախկինում մասնակցել է արբիտրաժի կողմերի մասնակցությամբ նույն առարկայի մասին, սակայն տարբեր փաստական հիմքերով գործի վեճի քննությանը.

3) արբիտրի հետ փոխկապակցված անձը հանդիսացել է կամ հանդիսանում է արբիտրաժի կողմ կամ մասնակից.

4) արբիտրը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ իր հետ փոխկապակցված անձը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:»:

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասեր.

«2.1. Սույն օրենքի իմաստով արբիտրի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում.

1) այն իրավաբանական անձը.

ա. որի կանոնադրական կապիտալում արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը ունեն մասնակցություն.

բ. որի որոշումները արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունեն կանխորոշել կամ որին կարող են տալ կատարման համար պարտադիր ցուցումներ.

գ. որում արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը հանդիսանում է կառավարման մարմնի անդամ.

դ. որի հետ արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը տվյալ արբիտրաժային վարույթի առնչությամբ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) այն ֆիզիկական անձը.

ա. ով արբիտրի ընտանիքի անդամ է (ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը՝ինչպես նաև համատեղ ապրող անձինք).

բ. ում հետ արբիտրը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն:

2.2. Արբիտրաժային հաստատությունները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից բացի իրենց ներքին կանոններով կարող են նաև սահմանել արբիտրին բացարկ հայտնելու այլ հիմքեր:»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «առ ոչինչ» բառը փոխարինել «անվավեր» բառով:

Հոդված 7. Օրենքի 17.3-րդ հոդվածի 3-րդ մասում «միջոցը չվնասելու» բառերը փոխարինել «միջոցի կատարումն անհնարին դարձնող գործողությունը չիրականացնելու» բառերով:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունից հանել «արբիտրաժի կանոնակարգով սահմանված ձևով, իսկ արբիտրաժի կանոնակարգով նման ձև սահմանված չլինելու դեպքում արբիտրաժային վարույթն իրականացվում է» բառերը:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում «վայրի օրենքը շարունակվում է» բառերը փոխարինել «վայրի օրենսդրությամբ ամրագրված ընթացակարգային նորմերը շարունակվում են» բառերով:

Հոդված 10. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի.

1) առաջին նախադասության մեջ «կոլիզիոն նորմերով» բառերից հետո լրացնել «՝ պատճառաբանելով այդ ընտրությունը» բառերը.

2) երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել հաշտության համաձայնության հիմքով վճիռ կայացնելը, եթե գտնում է, որ հաշտության համաձայնությունը կայացվել է արբիտրաժի իրավասության շրջանակներից դուրս գտնվող հարցի վերաբերյալ, կամ այն հակաօրինական է:»:

Հոդված 12. Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասում «բեկանման» բառը փոխարինել «չեղյալ ճանաչման» բառերով:

Հոդված 13. Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) արբիտրաժի կողմերը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, և»:

Հոդված 14. Օրենքի 35.4-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «կատարողական թերթ տալու» բառերը:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրային արբիտրաժի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-55-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում.

1) 4-րդ կետի առաջին նախադասության «վեճերը» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ դրանց առնչությամբ գործարքների կնքված լինելու կամ անվավերության հետ կապված հարցերը» բառերը.

2) 7-րդ կետի «25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի» բառերը փոխարինել «25-րդ հոդվածի 1-ին կետի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «Սույն օրենքի» բառերից հետո լրացնել «16-րդ հոդվածի 3-րդ մասով,» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «որևէ ձևով» բառերից առաջ լրացնել «սույն մասով սահմանված» բառերը:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասությունում «իսկ» բառից հետո լրացնել «միջազգային արբիտրաժի դեպքում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում: Արբիտրին բացարկ հայտնելու հիմքերը, ի թիվս այլնի, ներառում են այն դեպքերը, երբ.

1) արբիտրը կանխակալ վերաբերմունք ունի արբիտրաժի կողմի կամ մասնակցի(կողմի ներկայացուցչի, արբիտրաժային վարույթում որպես վկա, փորձագետ, մասնագետ ներգրավված անձանց) նկատմամբ.

2) արբիտրը նախկինում մասնակցել է արբիտրաժի կողմերի մասնակցությամբ նույն առարկայի մասին, սակայն տարբեր փաստական հիմքերով գործի վեճի քննությանը.

3) արբիտրի հետ փոխկապակցված անձը հանդիսացել է կամ հանդիսանում է արբիտրաժի կողմ կամ մասնակից.

4) արբիտրը գիտի կամ ողջամտորեն պետք է իմանա, որ նա անձամբ կամ իր հետ փոխկապակցված անձը տնտեսական շահ ունի՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:»:

2) լրացնել նոր 2.1-2.2-րդ մասեր.

«2.1. Սույն օրենքի իմաստով արբիտրի հետ փոխկապակցված անձ է հանդիսանում.

1) այն իրավաբանական անձը.

ա. որի կանոնադրական կապիտալում արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը ունեն մասնակցություն.

բ. որի որոշումները արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունեն կանխորոշել կամ որին կարող են տալ կատարման համար պարտադիր ցուցումներ.

գ. որում արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը հանդիսանում է կառավարման մարմնի անդամ.

դ. որի հետ արբիտրը կամ սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձը տվյալ արբիտրաժային վարույթի առնչությամբ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) այն ֆիզիկական անձը.

ա. ով արբիտրի ընտանիքի անդամ է (ծնողը, զավակը, որդեգրողը, որդեգրվածը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը կամ քույրը, պապը, տատը, թոռը, ամուսնու ծնողը կամ զավակի ամուսինը՝ինչպես նաև համատեղ ապրող անձինք).

բ. ում հետ արբիտրը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն:

2.2. Արբիտրաժային հաստատությունները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից բացի իրենց ներքին կանոններով կարող են նաև սահմանել արբիտրին բացարկ հայտնելու այլ հիմքեր:»:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «առ ոչինչ» բառը փոխարինել «անվավեր» բառով:

Հոդված 7. Օրենքի 17.3-րդ հոդվածի 3-րդ մասում «միջոցը չվնասելու» բառերը փոխարինել «միջոցի կատարումն անհնարին դարձնող գործողությունը չիրականացնելու» բառերով:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունից հանել «արբիտրաժի կանոնակարգով սահմանված ձևով, իսկ արբիտրաժի կանոնակարգով նման ձև սահմանված չլինելու դեպքում արբիտրաժային վարույթն իրականացվում է» բառերը:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում «վայրի օրենքը շարունակվում է» բառերը փոխարինել «վայրի օրենսդրությամբ ամրագրված ընթացակարգային նորմերը շարունակվում են» բառերով:

Հոդված 10. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի.

1) առաջին նախադասության մեջ «կոլիզիոն նորմերով» բառերից հետո լրացնել «՝ պատճառաբանելով այդ ընտրությունը» բառերը.

2) երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Արբիտրաժային տրիբունալը կարող է մերժել հաշտության համաձայնության հիմքով վճիռ կայացնելը, եթե գտնում է, որ հաշտության համաձայնությունը կայացվել է արբիտրաժի իրավասության շրջանակներից դուրս գտնվող հարցի վերաբերյալ, կամ այն հակաօրինական է:»:

Հոդված 12. Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասում «բեկանման» բառը փոխարինել «չեղյալ ճանաչման» բառերով:

Հոդված 13. Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) արբիտրաժի կողմերը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, և»:

Հոդված 14. Օրենքի 35.4-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «կատարողական թերթ տալու» բառերը:

Հոդված ~~13~~15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 317-րդ հոդվածի ~~317-րդ հոդված~~ 3-րդ մասի, 322-րդ հոդվածի 3-րդ մասի, 327-րդ հոդվածի 3-րդ մասի և 333-րդ հոդվածի 7-րդ մասի «մշտապես գործող արբիտրաժի նախագահի կողմից» բառերը փոխարինել «մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «34-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերով:

Հոդված ~~2~~3. Օրենսգրքի 318-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ,

«2. Եթե արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում, ապա նշված դիմումները միացվում են և

քննվում են արբիտրաժի վճռի համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննող դատավորի կողմից՝ մեկ վարույթի շրջանակներում:».

2) լրացնել նոր՝ 2.1-2.2-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով միացված դիմումները քննվում, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրերով:

2.2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում դատարանը կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Այդ դեպքում դիմումները քննվում, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու օրվանից երկու ամսվա ընթացքում:»:

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ,

«3. Դիմումի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումները միացնելու մասին դատարանի կողմից կայացվող որոշման մեջ, որը կայացվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ուղարկվում է արբիտրաժին և արբիտրաժային վարույթի կողմերին:»:

Հոդված ~~3~~4. Օրենսգրքի 320-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) դատարանի եզրահանգումը՝

ա. արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու.

բ. դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու.

գ. սույն օրենսգրքի 318-րդ հոդվածի 2.1-2.2-րդ մասերով սահմանված դեպքերում դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու և արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ:»:

Հոդված 45. Օրենսգրքի 323-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «մեկ ամսվա» բառերը փոխարինել «տասնհինգ օրվա» բառերով.

2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Եթե արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ապա դիմումները միացվում են և քննվում են արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննող դատավորի կողմից՝ մեկ վարույթի շրջանակներում:».

3) լրացնել նոր՝ 6.1-6.3-րդ մասերով.

«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով միացված դիմումները քննվում, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ առանց դատական նիստ հրավիրելու, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրերով:

6.2. Դատարանը կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Այդ դեպքում դիմումները քննվում, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

6.3. Դիմումի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումները միացնելու մասին դատարանի կողմից կայացվող որոշման մեջ, որը կայացվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ուղարկվում է արբիտրաժին և արբիտրաժային վարույթի կողմերին:»:

Հոդված ~~5~~6. Օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) դատարանի եզրահանգումը՝

ա. արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու.

բ. կատարողական թերթ տալը մերժելու.

գ. սույն Օրենսգրքի 323-րդ հոդվածի 6-6.2-րդ մասերով սահմանված դեպքերում արբիտրաժի վճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու կամ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու և արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին:»:

Հոդված ~~6~~7. Օրենսգրքի 326-րդ ~~հոդվածի~~ հոդվածի 1-ին մասում «և միջազգային առևտրային արբիտրաժների» բառերը հանել:

Հոդված ~~7~~8. Օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «արբիտրաժային դատարանի կամ միջազգային առևտրային արբիտրաժի» բառերը փոխարինել «արբիտրաժի» բառով:

Հոդված ~~8~~9. Օրենսգրքի 333-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) սույն օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու պահին գործն արբիտրաժի համապատասխան փուլում գտնվելու մասին վկայող փաստաթուղթը, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմում,»:

Հոդված ~~9~~10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՌԵՒՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-499-23.01.2023,13.03.2023-ՊԻ-011/1) ԵՒ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-499[1]-23.01.2023,13.03.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***Կառավարություն***	««Առեւտրային արբիտրաժի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդված	Օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ հոդվածով՝ «**Հոդված 13.** Օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. 3) արբիտրաժի կողմերը միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, և»: Հստակեցվել են այն դեպքերը, երբ մշտապես գործող արբիտրաժային հաստատությունը արբիտրաժային տրիբունալի վճիռը հարկադիր կատարման համար Հարկադիր կատարումն ապահովող	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			ծառայությանն է ներկայացնում էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:		
2.	***Կառավարություն***	««Առեւտրային արբիտրաժի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդված	Օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ հոդվածով՝ «**Հոդված 14.** Օրենքի 35.4-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «կատարողական թերթ տալու» բառերը:» Այսպես, Օրենքով սահմանված են արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը դիմում ներկայացնելու, դիմումի քննության ընթացակարգերը, ինչպես նաև դիմումին ներկայացվող պահանջները: Այսինքն, ըստ նշված կարգավորումների, հարկադիր կատարումն ապահովող ծառայության համար արբիտրաժի վճռի հարկադիր կատարումն ապահովելու համար հիմք է այն անձի դիմումը, որի օգտին կայացվել է արբիտրաժի վճիռը: Մինչդեռ Օրենքի 35.4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը, ինչը տեխնիկական վրիպակի արդյունք է: Հետևաբար, նշված մասում «կատարողական թերթ տալու» բառերն ավելորդ են:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական	Օրենքի նախագծի 1-ին հոդվածում կատարել շտկում՝ «317-րդ հոդված» բառերը փոխարինելով «317-րդ հոդվածի» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

		դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված		փոփոխությունը:	
4.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ հոդվածով՝ «**Հոդված 2.** Օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «34-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերով:» Այսպես, Օրենագրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումին կից ներկայացվում են «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների առկայության դեպքում՝ նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի պատճենը մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը հանձնելը կամ ուղարկելը հավաստող փաստաթուղթ: Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			սահմանված է արբիտրաժային տրիբունալի վճիռը դատարանի կողմից չեղյալ ճանաչելու պայմանները, իսկ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար պայմանները սահմանված են 35-րդ հոդվածի 4-րդ մասով: Այսինքն, տեխնիկական բնույթի սխալի հետևանքով ՔԴՕ 317-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով, այնինչ՝ պետք է նշվեր «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով:		
5.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Օրենքի նախագծի 7-րդ հոդվածում կատարել շտկում՝ «հոդվածԻ» բառը փոխարինել «հոդվածի» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
6.	***Կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության	Օրենքի նախագծի 9-րդ հոդվածում «փաստաթուղթը,» բառից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել է հայցի նախնական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությու	Ընդունվել է:

		օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված	ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմում,» բառերը: Այն դեպքերում, երբ ներկայացվել է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմում, չի գործի արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումին կից արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու պահին գործն արբիտրաժի համապատասխան փուլում գտնվելու մասին վկայող փաստաթղթի ներկայացման պահանջ:	նը:	